

## «ԴԵՂԻՆ ԲԱՃԿՆՆԵՐ»-Ը ՎԵՐԱԳԱՐՉԱՆ ՁԻՐԱՍԱԿԱՆ ՄԵԾ ՔԱՂԱՔՆԵՐՈՒ ՓՈՂՈՑՆԵՐ

«Դեղին Բաճկոններ» շարժումի ակնաևոր դեմքերուն կոչերուն ընդառաջելով շարժումը, ամառնային հանգիստէ ետք, շաբաթ օր վերադարձաւ ֆրանսական մեծ քաղաքներու փողոցներ: Մայրաքաղաք Փարիզի մէջ ապահովական իշխանութիւնները որոշեցին ուրբաթ օրուէն մինչեւ շաբաթ օր ընդհանուր կարգ ու կանոնի վտանգի լոյսին տակ արգիլել «հաւաքը ռեւէ անձերու, որոնք կը պնդեն, թէ շարժումին մաս կը կազմեն: Բողոքի ցոյցերու այս շարժումի ծնունդէն երկու տարի ետք «Դեղին բաճկոններ»-ը Մարսելի, Թուլուզի, Լիոնի, Լիլի, Նանթի, Նիսի, Փորթոյի, Սթրազբուրկի եւ Փարիզի մէջ հաւաքներու կազմակերպումը յայտարարեցին: Ապահովական ուժերը 256 ցուցարարներ ձերբակալեցին:

## ՎԱՐՉԱՊԵՏ ԱՏԻՊ ԱՅՍՕՐ ՆԱԽԱԳԱՀ ԱՌԻՆԻ ԿԸ ՅԱՆՉԵ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՆՈՐ ԿԱԶՄԸ

Լիբանանեան «Նաշրա» կայքը կը հաղորդէ, որ Նոր Աշխարհի վարչապետ Մուսթաֆա Ատիպ այսօր կառավարութեան Նոր կազմի թղթածրարը պիտի ներկայացնէ հանրապետութեան նախագահ գոր. Միշել Աունին, որ գայն պիտի ստորագրէ՝ սպասելով խորհրդարանի վստահութեան քուէին:




«Նաշրա»-ի աղբիւրները կը նշեն, որ ընտրանքները տակաւին բաց են՝ տրուած ըլլալով, որ շիիական քաղաքական գոյգ ուժերը կը մերժեն մաս կազմել որեւէ կառավարութեան, որ իրենց չի յանձնէր ելեւ-մուտքի նախարարութիւնը: Նոյն աղբիւրները կը յայտնեն, որ տարբերակներն մեկը Ազատագրում եւ բարգաւաճում եւ Զաւատարմութիւն դիմադրութեան երեսփոխանական պլոններու անդամներու քաշ-կիւն է խորհրդարանի վստահութեան քուէի նիստէն, որմէ ետք կը քաշուին նաեւ Լիբանանեան ժողովուրդավարական կուսակցութեան եւ Մարատայի ներկայացուցիչները եւ շիիական գոյգ ուժերուն դաշնակիցները:

Շար.ը՝ էջ 3

## ՀԱՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ ԴԷՄ ԲՈՂՈՔԻ ԵՒ ՉՕՐԱԿՑԱԿԱՆ ՉՈՅԳ ՅՈՅՅԵՐ

Շաբաթ, 12 սեպտեմբերին, Ազգային ազատ հոսանք կուսակցութեան համակիրները համախմբուեցան Նախագահական պալատ տանող մայր ճամբուն վրայ՝ «Յանրապետութեան արժանապատուութիւնը» կարգախօսին ներքեւ հանրապետութեան նախագահ գոր. Միշել Աունին գորակցութիւնը յայտնելու համար:



«Դեղին Բաճկոններ» շարժումի ակնաևոր դեմքերուն կոչերուն ընդառաջելով շարժումը, ամառնային հանգիստէ ետք, շաբաթ օր վերադարձաւ ֆրանսական մեծ քաղաքներու փողոցներ: Մայրաքաղաք Փարիզի մէջ ապահովական իշխանութիւնները որոշեցին ուրբաթ օրուէն մինչեւ շաբաթ օր ընդհանուր կարգ ու կանոնի վտանգի լոյսին տակ արգիլել «հաւաքը ռեւէ անձերու, որոնք կը պնդեն, թէ շարժումին մաս կը կազմեն: Բողոքի ցոյցերու այս շարժումի ծնունդէն երկու տարի ետք «Դեղին բաճկոններ»-ը Մարսելի, Թուլուզի, Լիոնի, Լիլի, Նանթի, Նիսի, Փորթոյի, Սթրազբուրկի եւ Փարիզի մէջ հաւաքներու կազմակերպումը յայտարարեցին: Ապահովական ուժերը 256 ցուցարարներ ձերբակալեցին:

Շար.ը՝ էջ 3

## ԿԻՊՐՈՍԻ ԴԵՏ ԾՈՎԱՅԻՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒ ԱՆՎՏԱՆԳՈՒԹԵԱՆ ՊԱՅՊԱՆՍԱՆ ՄԱՐԶՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՍՏՈՐԱԳՐԵԼԷ ԵՏԸ

### «ԱՄԵՐԻԿԱՆ ՄԵԾԱՊԷՍ ՄՏԱՀՈՎ Է ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԻՋԵՐԿԱՐԱԿԱՆԻ ՄԷՋ ԹՈՒՐԲԻՈՅ ՔԱՅԼԵՐՈՎ»

Կ'ԸՍԷ ՓՈՍՓՕԸ

Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Մայք Փոմփոյ իր կիպրացի պաշտօնակիցին հետ ստորագրեց ծովային սահմաններու անվտանգութեան պահպանման մարզումի փոխադարձ հասկացողութեան փաստաթուղթ մը, եւ Կիպրոսի նախագահ Անաստասիատեսի հետ իր հանդիպումին ընթացքին մտահոգութիւն յայտնեց արեւելեան Միջերկրականի մէջ թրջական պեղման աշխատանքներուն նկատմամբ:



«Ամերիկայի մեծապետ մտահոգ է արեւելեան Միջերկրականի մէջ թրջական պեղման աշխատանքներուն Թուրքիոյ քայլերով», ըսաւ Փոմփոյ:

Շար.ը՝ էջ 3

## ՕՍԱՆԻ ԴԵՏ ԻՍՐԱՅԵԼԻ ՅՈՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԲՆԱԿԱՆՈՆԱՅՈՒՄԸ ՊԱՐԶԱՊԷՍ ԺԱՄԱՆԱԿԻ ԶՈՐՑ Է

### «ԻՍՐԱՅԵԼԻ ՀԵՏ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆԸ ԱՅԼ ԵՐԿԻՐՆԵՐ ԵՒՍ ՄԵՐՉԵՅՄԱՆ ՊԻՏԻ ՄՂԷ»

Կ'ԸՍԷ ՊԱՅՐԵՅՆԻ ԹԱԳԱՒՈՐԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԸ

Պահրէյի թագաւորի խորհրդական ռաբբի Մարք Ծթայնը յայտնած է, թէ Պահրէյի եւ Իսրայէլի միջեւ համաձայնութիւնը Արաբական ծոցի այլ երկիրներ են պիտի մղէ Իսրայէլի հետ մերձեցման ու խաղաղութեան հաստատման:



Շար.ը՝ էջ 3

## ԹՈՒՐԲԻԱ «ՕՐՈՒՉ ՌԷՅԻՍ» ՆԱԸ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԻՋԵՐԿԱՐԱԿԱՆԻ ԿԸ ՎԵՐԱԳԱՐՉԱՆ ԱՆԹԱԼՈՅ ՆԱԻՎՀԱՆԳԻՍ

Թրքական իշխանութիւնները Աթէնքի եւ Անգարայի միջեւ ՕՐՈՒՉ ՌԷՅԻՍ-ի հո՞վ ակնաւորութեամբ բանակցութիւններէ ետք բնական հարստութիւններու որոնման «Օրուլ Ռեյիս» նաւը արեւելեան Միջերկրականի շրջանէն վերադարձուց Անթալիոյ նաւահանգիստ: Այս մասին կը հաղորդէ «Սփոյնիք»-ը:



Շար.ը՝ էջ 3

## «ՄԵԾԻ ՏԱՆԸ ԿԵԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՐՈՒԹԵԱՄԸ ԼԻԲԱՆԱՆԻ ԵՒ ՍՈՒՐԻՈՅ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՐՈՒԹԵԱՄԸ ՊԻՏԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ»

ՇԵՇԵՏ ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ



Այս հաստատ վճռակամութեամբ, 10 սեպտեմբերին վեհափառ հայրապետը շեշտեց Լիբանանի եւ Սուրիոյ հայ համայնքներուն վերականգնումի հրամայականը՝ Ազգային կեդրոնական վարչութեան ժողովին, լսելէ ետք Լիբանանի հայոց թեմի առաջնորդ Շա-

հէ արք. Փանոսեանի եւ Բերիոյ հայոց թեմի առաջնորդ Մասիս եպ. Զօպուեանի գեկուցումները յիշեալ համայնքներու վերականգնումի աշխատանքներուն մասին:

Շար.ը՝ էջ 3

## ՊԱՐՈՒՆԻՎԻ ՔՈՔՍ ՊԱՏԱՍԽԱՆ ՆԱՄԱԿ ՄԸ ՅՂԱԾ Է ԲԻՏԱՆԻՈՅ ՄԷՋ ԱԶՐՊԵՅՃԱՆԻ ԴԵՍՊԱՆԻՆ


Բրիտանիոյ Լորտերու պալատի անդամ պարոնուի Զարուայն Զոքս 10 սեպտեմբերին Նամակ մը յղեց Բրիտանիոյ մէջ Ազգայնականի դեսպան Թահիր Թաղիզատէին՝ պատասխանելով վերջինիս 7 սեպտեմբեր թուակիր Նամակին:



Շար.ը՝ էջ 4

## ՄԱՅԱՑԱԻ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ ԵՒ ՄՏԱԻՈՐԱԿԱՆ ՎԱՐԱՆԴ ՓԱՓԱՁԵԱՆ

Շաբաթ օր 33 Դաշնակցութեան մեծ ընտանիքը կորսցուց իր կուսակցական վաստակաշատ գործիչներէն, դաշնակցական գաղափարական անհոններուն հաւատարիմ մտաւորականներէն Վարանդ Փափազեանը, որ տասնամեակներ շարունակ, դաշնակցական մեծ գործի թիւում էր: Այս առումով մեծ է անոր ներդրումը ուսանողական, երիտասարդական եւ պատանեկան դաստիարակչական ծրագիրներու մշակման եւ ընդհանրապէս մերիտասարդական միաւորներու գաղափարներուն շուրջ համախմբման աշխատանքներուն մէջ:



Վարանդ Փափազեանին անհոնը անմոռանալի պիտի մնայ մասնաւորաբար իր գաղափարական կուսակցական գործիչ ըլլալու հանգամանքով: Այս հանգամանքին բերումով ալ, ան տարիներ շարունակ մաս կազմեց կուսակցական կազմաւորման եւ դաստիարակչական համակուսակցական աշխատանքներուն: Մաս կազմած է 33-ի Բիւրոյի գանազան մարմիններուն, ուր իր վերլուծական եւ քննական մտքով իր նպաստը բերած է կուսակցական ռազմավարական ուղղութիւններուն ճշդորոշման: Շաբաթ օր դաշնակցական կազմաւորման ծիրին մէջ քանիցս դաստիարակչական դասախօսութիւններով հանդէս եկած է Նորագիրներու թէ Դաշնակցութեան բողոքի աշխատանքներուն ծիրին մէջ:

Այս առումով մեծ է անոր ներդրումը ուսանողական, երիտասարդական եւ պատանեկան դաստիարակչական ծրագիրներու մշակման եւ ընդհանրապէս մերիտասարդական միաւորներու գաղափարներուն շուրջ համախմբման աշխատանքներուն մէջ: Վարանդ Փափազեան անհամ եղած է նաեւ 33-ի Լիբանանի Կեդրոնական կոմիտէին: 7 ղեկավարներ 1988-ին հիւսիսային Զայաստանը պատուհասած երկրաշարժէն անմիջապէս ետք ան ղեկավարութիւն ունեցած է աղետալներուն համար Լիբանանէն մատուցուած օժանդակութիւններուն կազմակերպման աշխատանքին մէջ: Անսալով 33 Դաշնակցութեան «Դեպի երկիր» կարգախօսին՝ Վարանդ Փափազեանը, իբրեւ կուսակցական գործիչ, 1989-ԷՆ սկսեալ լայնածաւալ աշխատանք կը կատարէ Զայաստանի մէջ կուսակցական կառուցներու ձեւաւորման, Նորագիրներու անդամառչակի եւ ի վերջոյ 1990-ին հայրենի հողին վրայ 33-ի վերընծիւղման ուղղութեամբ: Այս իմաստով ալ անուրանալի կը մնայ ազգային զարթօնքի եւ վերակախացման առաջին տարիներուն Վարանդ Փափազեանի դերակատարութիւնը հայրենիքի մէջ Դաշնակցութեան կայացման աշխատանքին մէջ:

Միաժամանակ, անմոռանալի կը մնայ Վարանդ Փափազեանի նուիրումն ու նպաստը Արցախեան ազատագրական պայքարին եւ Արցախի մէջ 33-ի կազմակերպական կառուցի կայացման աշխատանքներուն մէջ: Այս փուլին ան եղած է խորհրդական Արցախի Զանրապետութեան Գերագոյն խորհուրդի առաջին նախագահ Արթուր Մկրտչեանի եւ ապա Գերագոյն խորհուրդի նախագահի պաշտօնակատար Գերգի Պետրոսեանի:

Երկու փուլով՝ 1980-ականներու երկրորդ կեսին եւ 1990-ականներու երկրորդ կեսին, ան ստանձնեց 33-ի Լիբանանի Կեդրոնական կոմիտէի պաշտօնաթերթը «Ազգայն» օրաթերթի տնօրէնի պատասխանատու պաշտօնը: Դաշնակցական գաղափարական անհոններէն սնած՝ Վարանդ Փափազեանի գործին կը պատկանին նախ «Ազգայն շաբաթօրեակ-Դրօշակ»-ի եւ ապա 33-ի պաշտօնաթերթը «Դրօշակ»-ի մէջ լոյս տեսած գաղափարաբանական բնոյթի յօդուածներ: 1993-ին Երեւանի մէջ լոյս կը տեսնէ իր «Յայ ազգային ռազմավարութիւնը» խորագրեալ գիրքը:

Վարանդ Փափազեանի մահով, Դաշնակցութեան ընտանիքը կը կորսնցնէ կազմակերպական, դաստիարակչական, հրապարակագրական մարզերուն մէջ յատուկ անհոն ներդրած գաղափարական գործիչ մը:

### ՄԱՀԱՁԳ

33-ի Բիւրոն խոր վիշտով կը տեղեկացնէ վաստակաշատ դաշնակցական, մտաւորական, երկարամեայ կուսակցական գործիչ ընկեր ՎԱՐԱՆԴ ՓԱՓԱՁԵԱՆԻ մահը:

Ընկեր Վարանդ մտաւորականի իր բարձր մակարդակով, անխնջ աշխատանքով, անմը-նացորդ նուիրուածութեամբ՝ մեծ ներդրում ունեցաւ դաշնակցական գործի յառաջընթացին մէջ: Ան օրինակ էր եւ կը մնայ որպէս այդպիսին՝ դաշնակցական սերունդներու համար:

33 Դաշնակցութեան անունով մեր ցաւակցութիւնը կը յայտնենք ընկեր Վարանդի ընտանիքին, հարազատներուն եւ ընկերներուն:

33-ի ԲԻՐՕ

12 սեպտեմբեր 2020

### ՄԱՀԱՁԳ

33-ի Լիբանանի Կեդրոնական կոմիտէն կը գումար 33-ի Լիբանանի Կեդրոնական կոմիտէի նախկին անդամ, «Ազգայն»-ի նախկին տնօրէն, վաստակաշատ կուսակցական գործիչ

### ՎԱՐԱՆԴ ՓԱՓԱՁԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ շաբաթ, 12 սեպտեմբեր 2020-ին:



### ՊԸՐՐԻԻ ՏԵՂԵԿՍՈՒՎԿԱՆ ԳՐԱՄԵՆԵԱԿ «ՎԱՐՉԱՊԵՏ ԱՏԻՊԻՆ ՅԱՅՏՆԵՏԻՆՔԻ, ՈՐ ՄԵՆՔ ԶԵՆՔ ՓՎՓՎՔԻՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՄԱՍ ԿԱԶՄԵԼ»

Խորհրդարանի նախագահ Նեայիի ՊԸՐՐԻԻ տեղեկատվական գրասենյակը հրապարակեց հետևեալ հարցազրույթը...



Նեայիի ՊԸՐՐԻԻ տեղեկատվական գրասենյակը հրապարակեց հետևեալ հարցազրույթը...

### ՊԱՄԻԼ «ՄԵՆՔ ՓՎՓՎՔ ԶՈՒՆԻՆՔ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՄԱՍ ԿԱԶՄԵԼՈՒ, ԲԱՅՅ ՊԻՏԻ ԳԻՒՐԱՅՆՆԵՔԻ ԱՆՈՐ ԿԱԶՄՈՒԹԻՆՔ ԵՒ ՊԻՏԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԻՆՔ»

Ազգային ազատ հոսանք կուսակցության ղեկավար, երեսփոխան Ժալբաբյան Պասիլ երկ Կատարում...



Պասիլ Նեյրի ՊԸՐՐԻԻ տեղեկատվական գրասենյակը հրապարակեց հետևեալ հարցազրույթը...

### ՊՇԱՐԱ ՌԱՅԻ ՊԱՏՐԻԱՐՔԸ ՄԱԿ-ԷՆ ՊԱՆՈՒՅՏԻ ԼԻՔԱՆԱԵՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՆՆԵՐՈՒՆ ԿԱՍՏԱՄԱՐ ՀԵՏԱՔՆՆՈՒԹԻՆ ՊԱՐՏԱԳԻՐԵԼ

Մարոնի համայնքի Պշարա Ռայի պատրիարքը երկ Զարիսայի մեջ նախագահեց ՊԵՐՈՒՅԻ ՆԱԿԱԳԱԿԻՆ...



Մարոնի համայնքի Պշարա Ռայի պատրիարքը երկ Զարիսայի մեջ նախագահեց ՊԵՐՈՒՅԻ ՆԱԿԱԳԱԿԻՆ...

### ՖՐԱՆՍԱՅԻ ԴԵՄՊԱՆ ՊՐՈՒՆՕ ՖՈՒՇԻԷ ԿՄԱՐՏԵ ԼԻՔԱՆԱԵՆԻ ՄԵՋԻՐ ԳԻՒՐԱՅՆԱԿԻՏԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՆՔ

Լիբանանեան-ֆրանսական խորհրդարանական բարեկամական յանձնախումբի նախագահ, երեսփոխան Սիմոն Ապի Ռամի...



Սիմոն Ապի Ռամի խորհրդարանական բարեկամական յանձնախումբի նախագահ...

Անդրադառնալով ֆրանսական նախաձեռնությանը Պասիլ յայտնեց, որ կուսակցությունը համաձայն է ատոր, ո՛չ միայն այն պատճառով, որ Ֆրանսան քարեկամ էրկիր է...

Պասիլ Նեյրի ՊԸՐՐԻԻ տեղեկատվական գրասենյակը հրապարակեց հետևեալ հարցազրույթը...

Խօսքը ուղղվելով գոհերու ընտանիքներուն՝ Ռայի պատրիարքը յայտնեց, որ այս էջը պիտի չհասնի, մինչև որ ճշմարտությունը բացայայտվի...

«Մարոնի համայնքի Պշարա Ռայի պատրիարքը երկ Զարիսայի մեջ նախագահեց ՊԵՐՈՒՅԻ ՆԱԿԱԳԱԿԻՆ...

Պատրիարքը շեշտեց, որ Լիբանան իր շախուժ չէզոքությանը, անհրաժեշտություն է միջխառնելու...

Ռայի պատրիարքը հարց տուա, թե ինչու կ'ուշանայ սեղմ կազմով փրկության կառավարության կազմում...

Ապի Ռամի յայտնեց, որ Ֆրանսա երրորդ ընտրանք մը տուա Լիբանանին, ինչ որ լիբանանցիներուն մօտ նոր յոյսեր ստեղծեց այս դժուար փուլին...

### ՌԱՎԿՊ «ԳԱԻՎԳԻՐ Է ԿԱՄ ՄԻԱՄԻՏ ԱՅՆ ԱՆՁԸ, ՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՆ ՄԸ ԿԸ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ԵՒ ԱՌԱՅ ՇԻՒՎԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶՈՅԳ ՈՒՇԵՐՈՒՆ»

Թաուհիտ հոսանքի նախագահ, նախկին նախարար Ռուստամ Ռահապ ընկերային ցանցերուն ընդմեջէն կատարած իր յայտարարության մեջ յայտնեց, որ ինք առաջին անձն էր, որ կոչ ուղղեց ելեմուտքի նախարարությունը...



Ռուստամ Ռահապ ընկերային ցանցերուն ընդմեջէն կատարած իր յայտարարության մեջ յայտնեց...

Պասիլ Նեյրի ՊԸՐՐԻԻ տեղեկատվական գրասենյակը հրապարակեց հետևեալ հարցազրույթը...

### ԼԻՔԱՆԱԵՆԻ ՄԵՋ «ՔՈՐՈՆԱ» ԺԱՇՐՈՎ ՎԱՐԱԿՈՒՄԾՆԵՐՈՒՆ ԹԻՒԸ ՀԱՍԱԻ 24.310-Ի

Առողջապահության նախարարության տեղեկություններուն համաձայն, երեկ Լիբանանի մեջ «Զորոնա» ժահրով վարակուածներուն թիւը հասաւ 24.310-ի վերջին 24 ժամուան ընթացքին...

ՖԻՆԻՒԼ-ի խաղաղապահ ուժերու 90 անդամներ վարակուած են «Զորոնա» ժահրով: Վարակուածներ կան նաեւ Ռուսիայի բանտարկեալներուն եւ բանտին հսկող Ներքին ապահովության ուժերու շարքերուն մեջ:

75th Anniversary of the Republic of Armenia (1991-2020) logo and text regarding the 2020-2021 National Election System Development and Modernization Project.



### ՎԵՐԱՑՄԱՆ ՍՈՒՐԲ ԽԱՉԻ ՏՕՆԸ՝ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԷՉ



Հայ եկեղեցույ հինգ տողաւար տօներուն վերջինը եւ խաչի տօներուն երկրորդը՝ Վերացման Սուրբ խաչի տօնը այս տարի եւս Անթիլիասի մայրավանքին մէջ հանդիսաւորապէս նշուեցաւ՝ նախագահութեամբ Արամ Ա. վեհափառ հայրապետին:



Հայ եկեղեցույ հինգ տողաւար տօներուն վերջինը եւ խաչի տօներուն երկրորդը՝ Վերացման Սուրբ խաչի տօնը այս տարի եւս Անթիլիասի մայրավանքին մէջ հանդիսաւորապէս նշուեցաւ՝ նախագահութեամբ Արամ Ա. վեհափառ հայրապետին:

Արարեւ, կիրակի, 13 սեպտեմբեր 2020-ին, Անթիլիասի մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ մայր տաճարին մէջ մատուցուեցաւ Ա. Ե. և անմահ պատարագ: Պատարագը մատուցեց եւ յաւուր պատշաճի քարոզեց կաթողի-

կոսարանի մատենադարանապետ Հահան արք. Սարգիսեան: Պատարագիչ սրբազանը իբրեւ քնարան ընտրած էր «Զեզմէ ակնաճողներուն դրօշ մը տուիր, որպէսզի ազատին մահացու աղոյճն» (Սղ. 60.4) համարը: Ան մատանանջեց, թէ դրօշը՝ խաչը Տերը Ինքն է, եւ երբ Ան ներկայ է մեր կեանքին մէջ, ուրեմն թշնամիին բոլոր յարձակումները պարտութեան կը մատուցուին: Սրբազանը աւելցուց, որ խաչը անձեռագործ դրօշն է երկին-

Աւարտին, ան աղօթք վերառաքեց ան Աստուած եւ խնդրեց Ամենակալին, որ պահէ ու պահպանէ Լիբանանը, Սուրիան եւ մեր հայրենիքը՝ Իր Ա. խաչին նշանով:

Յայտնենք, որ Ա. պատարագէն անմիջապէս ետք, վեհարանին մէջ վեհափառ հայրապետը «Սիլիսիա Թի.Վի.»-ին ճամբով ուղղեց իր հայրապետական պատգամը Սուրբ խաչի Վերացման տօնին առիթով:

### «ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻՒԿԻՈՅ ԿԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ...»

Շարունակուած Ա. էջէն

Լիբանանահայոց անաջնորդ սրբազանը, իբրեւ նախագահը Լիբանանահայութեան վերականգնումի մարմինին, մանրամասն գեկուցում տուաւ՝ թիւերով, դէպքերով, հանդիպումներով եւ յայտարարութիւններով ներառուած, մարմինին կատարած ու կատարելիք աշխատանքներուն մասին: Վեհափառ հայրապետը ողջունելով կատարուած աշխատանքը շեշտեց, որ շուտով անհրաժեշտ է ամբողջացնել տուններու վերանորոգումը, որպէսզի ծրագրուին վերականգնումի յառաջիկայ փուլերը: Յայտնենք, որ ժընեի մէջ հաստատուած Լիբանանահայութեան վերականգնումի յատուկ հաշուեզույժին գումարներ կը փոխանցուին մարմինին, որպէսզի ան կարենայ իր աշխատանքը լիովին կատարել:

տեղիներուն կատարուած օժանդակութիւնը իր դրական արդիւնքը տուած է, եւ համայնքային բոլոր կառոյցները աշխուժ աշխատանքի լծուած են: Վեհափառ հայրապետը կաթողիկոսութեան անունով իր բարձր գնահատանքը յայտնեց յիշեալ երկու կարեւոր համայնքներու վերականգնումի աշխատանքներուն լծուած թեմակալ առաջնորդներուն, Ազգային իշխանութեանց եւ բոլոր կազմակերպու-

թիւներուն: Վեհափառ հայրապետը անգամ մը եւս վստահեցուց առաջնորդ սրբազաններուն ճամբով Լիբանանի ու Սուրիոյ հայութեան, թէ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը պիտի շարունակէ գործնական նշուած կանգնելու մեր համայնքներու վերականգնումին: Վեհափառ հայրապետը նաեւ յիշեցուց, որ անհրաժեշտ է միշտ տեղեակ պահել ժողովուրդը կատարուած աշխատանքներուն մասին:

### ՖԻՐԱՍԱՅԻ ԴԵՍՊԱՆ ...

Շարունակուած 2-րդ էջէն

Իր կարգին, դեսպան Պրոնտ Ֆուշիէ նշեց, որ Լիբանան այժմ դժուար փուլ կը դիմագրաւէ, եւ յոյս յայտնեց, որ երկիրը օգտուի նախագահ Մաքրոնի կատարած քաղաքական նախաձեռնութենէն, որպէսզի վերականգնուի: Դեսպանը ընդգծեց, որ ատիկա քաղաքական խմբաւորումներէ կ'ենթարդէ պահանջուած բարեկարգումները իրականացնելը: Դեսպանը նշեց, որ հակառակ շրջանային բարդութիւններուն, կան կենցաղային հիմնական թղթածրարներ, որոնք առնչուած են միայն լիբանանցիներու կամքին եւ ճիշդ կառավարումին հետ: Ըստ անոր, կը պահանջուի կատարել հիմնական բարեկարգումները եւ ստանալ միջազգային ընտանիքի աջակցութիւնը: Դեսպան Պրոնտ Ֆուշիէ իր խօսքը եզրափակեց ըսելով, որ Լիբանանէն իրեն հետ պիտի տանի լիբանանցիները բնութագրող մշակութային եւ քաղաքական բազմազանութիւնն ու տարբերութիւնը՝ հակառակ բոլոր բարդութիւններուն:

### ՎԱՐՉԱՊԵՏ ԱՏԻՊ ԱՅՍՈՐ ...

Շարունակուած Ա. էջէն

Այսպիսով, երկիրը կը գտնուի «Ազգային ուխտ»-ի տագնապի մէջ, այն պարագային, երբ շիի եւ տիրզի համայնքներու բաղադրիչները բացակային խորհրդարանի նիստէն: Սակայն, եթէ նոր կառավարութիւնը անհրաժեշտ խորհրդարանական վստահութեան քուէն չստանայ, ապա ատիկա պիտի ունենայ ընթացիկ աշխատանքներու կատարման դեր մինչեւ նոր կառավարութեան կազմութիւնը: Սակայն, նկատի առնելով շահագրգիռ կողմերու փոխադարձ լրջութիւնը՝ պայմանաւորուած Ֆրանսային խոստացուած երկու շաբթուան ժամկետին մէջ կառավարութիւն կազմելու կետով, տակաւին կարելի է լուծում գտնել այսօր կետի առաջ:

### ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ...

Շարունակուած Ա. էջէն

Նոյն պահուն ժողովրդային շարժումի խմբաւորումները հաւաքուեցան Պեյրութի Արդարադատութեան պալատին առջեւ եւ սկսան ուղղուիլ դէպի նախագահական պալատ:



Երբ ժողովրդային շարժումի մասնակիցները հասան նախագահի գորակցական ցոյցի մասնակիցներուն մօտ, բանակը արդէն իսկ մարդկային պատնէշ կազմած էր՝ կանխելու համար երկու ցոյցերու մասնակիցներուն միջեւ բախումները: Ժողովրդային շարժումի մասնակիցները քարեր նետեցին եւ տախտակներով հարուածեցին զինուորներուն, որպէսզի յաջողին հասնիլ նախագահական պալատ: Բանակը ստիպուեցաւ կրակել օդը՝ կարգ ու կանոն պարտադրելու համար:

### «ԱՄԵՐԻԿԱՆ ՄԵԾԱՊԷՍ ...»

Շարունակուած Ա. էջէն

Ամերիկեան դիւանագիտութեան պետը յայտնեց, որ շրջանին մէջ լարուածութիւնները արեւելեան Միջերկրականի մէջ խնդիրներուն լուծում պիտի չբերեն՝ շեշտելով, որ պետք է առկայ խնդիրներուն շուրջ համաձայնութիւն գոյանայ:

Փոմփօ Կիպրոս այցելեց՝ ընտրելու համար արեւելեան Միջերկրականին մէջ հետզհետեւ աճող լարուածութեան հարցը: Ան Կիպրոս այցելութեան նախօրեակին Թուրքիոյ կողմէն ուղղեց իր ուժերը հեռացնելու արեւելեան Միջերկրականէն: Ան յայտնեց, որ Կիպրոս իր այցելութիւնը կու գայ ամբողջացնելու Միացեալ Նահանգներու նախագահ Տանըլտ Թրամփի՝ իր թուրք եւ յոյն պաշտօնակիցներուն հետ կատարած հեռաձայնային հաղորդակցութիւնները: Մինչ այդ, Թուրքիա Կիպրոսի ծովափին մօտ երկօրեայ ռազմափորձերու ձեռնարկեց:

### «ԻՍՐԱՅԷԼԻ ՀԵՏ ...»

Շարունակուած Ա. էջէն

Իսրայէլեան «Մաքան» պատկերասփիւռի կայան շաբթօք երեկոյեան հաղորդեց, թէ Շթայնըր յայտնած է, որ Օմանի հետ Իսրայէլի յարաբերութիւններու բնականոնացումը պարզապէս ժամանակի հարց է:

Ան նշած է, որ Պահրէյնն ու Արաբական Միացեալ Եմիրութիւնները կը փրկեն երկու ժողովուրդներու երկու պետութիւններ լուծումը եւ յանձնառու են պահեստիցի ժողովուրդին աջակցելուն, սակայն գիտակցած են, թէ շրջանային խաղաղութեան ուղին կ'անցնի տնտեսական գործակցութենէն: Պահրէյնի թագաւորի խորհրդական Մարք Շթայնըր յայտնած է նաեւ, որ մեկնելով պահրէյնցիները ճանչնալէ, կրնայ ըսել, թէ իսրայէլացի զբօսաշրջիկները պիտի կարենան Պահրէյն այցելել անմիջապէս, որ երկու կողմերուն միջեւ յարաբերութիւններու բնականոնացման համաձայնութեան ստորագրումը պաշտօնապէս յայտարարուի: Յիշեցնենք, որ Պահրէյնի եւ Արաբական Միացեալ Եմիրութիւններուն Իսրայէլի հետ յարաբերութիւններու բնականոնացման համաձայնագիրներու ստորագրութեան պաշտօնական արարողութիւնը տեղի պիտի ունենայ երէջաքաթի օր, Սպիտակ տան մէջ:

### ԹՈՒՐԲԵԿԱ «ՕՐՈՒՉ ՌԷՅԻՍ» ...

Շարունակուած Ա. էջէն

Թրքական իշխանաւմէտ «Ենի Շաֆաք» օրաթերթը երէկ հաղորդեց, որ յունական կողմին հետ բանակցութիւններէ ետք, «Օրուչ Ռեյիս» նաւը առկախած է իր աշխատանքները այն շրջանին մէջ, ուր կը նախատեսուէր գանձը շարունակել մինչեւ 25 սեպտեմբեր: Օրաթերթը աւելցուց, որ նաւը վերադարձած է Անթիլիոյ նահանգիստ: Նշենք, որ Յունաստանի կառավարութեան բանբերը երէկ յայտնեց, որ իր երկիրը կ'ոգնուէ թրքական դրոմման նաւուն Անթիլիոյ նահանգիստ վերադարձը, «եւ գայն կը նկատենք դրական զարգացում մը»:

### ՀՅԴ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՐԱԳՈՅՆ ՄԱՐՄԻՆԻ ՑԱՒԱԿՑԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ՝ ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ԳՈՐԾԻՉ ՎԱՐԱՆԴ ՓԱՓԱԶԵԱՆԻ ՄԱՅՐՈՒՆ ԱՌԻԹՈՎ

ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմինը ցաւով կը տեղեկացնէ ՀՅԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի նախկին անդամ, «Ազդակ» օրաթերթի նախկին տնօրէն, ազգային-կուսակցական վաստակաշատ գործիչ Վարանդ Փափազեանի մահուան մասին եւ կը ցաւակցի հանգուցեալի ընտանիքին, հարազատներուն եւ ընկերներուն: Սիրելի ընկերոջ լուսաւոր հետազօծը դեռ պիտի արժեւորուի սերունդներուն կողմէ, իսկ անոր յիշատակը անմար պիտի մնայ բոլորիս սրտերուն մէջ:

ՀՅԴ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՐԱԳՈՅՆ ՄԱՐՄԻՆ

### ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

ՀՅԴ Արցախի Կեդրոնական կոմիտեւթեան անունով մեր խորին ցաւակցութիւնը կը յայտնենք ՀՅԴ վաստակաւոր գործիչ, գաղափարական ընկեր Վարանդ Փափազեանի հարազատներուն, բարեկամներուն եւ կուսակցական ընկերներուն՝ իրենց կրած անդառնալի կորուստին համար: Ամոռանալի է ընկեր Վարանդին անմացորդ նուիրումը Արցախի ազատատարական պայքարին եւ անոր անփոխարինելի աւանդը ՀՅԴ Արցախի կառոյցի կայացման գործին մէջ:

ՀՅԴ ԱՐՑԱՒԻ ԿԵՐՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

### ՄԱՀԱԶԴ

ՀՅԴ «Գարեգին Նժդեհ» կոմիտէն կը գուժէ իր շրջանի վաստակաշատ ընկերներէն՝

### ՎԱՐԱՆԴ ՓԱՓԱԶԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ շաբթօք, 12 սեպտեմբեր 2020-ին:

### ՄԱՀԱԶԴ

«Ազդակ»-ի տնօրէնութիւնը, խմբագրական կազմը եւ պաշտօնակցները կը գուժեն «Ազդակ»-ի նախկին տնօրէն

### ՎԱՐԱՆԴ ՓԱՓԱԶԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ շաբթօք, 12 սեպտեմբեր 2020-ին:

### ՄԱՀԱԶԴ

Տիկին Ալին Փափազեան Տեր եւ տիկին Ասպետ եւ Թալին Աւետիսեան եւ զաւակները՝ Շահէն եւ Ալիք Տեր եւ տիկին Բագրատ եւ Կարին Չոհրապետեան եւ զաւակները՝ Դուրի, Տարօն, Սեպուհ եւ Նարե Տեր եւ տիկին Արմէն եւ Թալին Փափազեան եւ զաւակները՝ Արէն, Նայիրա, Ռուբէն եւ Վիգէն Տեր եւ տիկին Կարօ եւ Անի Նազարեան եւ զաւակները՝ Վայք, Տիրան եւ Լոր Տեր եւ տիկին Սկրտիչ եւ Շաղիկ Սկրտիչեան եւ ընտանիք Տեր եւ տիկին Վաչէ եւ Սիլվա Փափազեան եւ ընտանիք Տեր եւ տիկին Ստեփան եւ Անի Աստուրեան եւ ընտանիք

Փափազեան եւ Պերպրեան ընտանիքներ Ամասեան եւ Գոնիպետեան ընտանիքներ Աւետիսեան եւ Չոհրապետեան ընտանիքներ Արթիսեան եւ Նազարեան ընտանիքներ Ենիգոմշեան եւ Չըպալբեան ընտանիքներ եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր, մեծ հօր, եղբոր, մօրեղբոր, հօրեղբոր եւ հարազատին՝

### ՎԱՐԱՆԴ ՓԱՓԱԶԵԱՆԻ

անակնկալ մահը, որ պատահեցաւ շաբթօք, 12 սեպտեմբեր 2020-ին: Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի չորեքշաբթի, 16 սեպտեմբեր 2020-ին: Յաւելեալ մանրամասնութիւններ՝ յաջորդի: ●Ներկայիս ընդունիլ իբրեւ մահագր:



